ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2025 թվականի N 1297

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. 4212 «Էներգետիկ ծառայություններ» սինթետիկ հաշվի 4-րդ եռամսյակից 5000,0 հազ. դրամ, 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» սինթետիկ հաշվի 4-րդ եռամսյակից 5069,0 հազ. դրամ պակասեցնել և 10000,0 հազ.դրամ տեղափոխել 4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» սինթետիկ հաշիվ, 69,0 հազ. դրամ՝ 4233 «Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ» սինթետիկ հաշիվ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2025 թվականի N 1296

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամաս, 17-րդ շենք բնակարան 34 հասցեի բնակիչ Պավլիկ Տրդատովի 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 5631/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 04-ի «Պետական, հանրային և համայնքային բնակ ֆոնդի բնակարանների անհատույց սեփականաշնորհում թույլատրելու մասին» թիվ 15 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 8-րդ թաղամաս 17-րդ շենք 34 բնակարան) ***«Տրդատովա Նովելլա»*** բառերը փոխարինել համապատասխան ***«Տրդատովա Նովելլա Արտյունի»*** բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» նոյեմբերի 2025 թվականի N 1293

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ <<ՊԻՈՆ>> ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-008-0282-0193 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10–րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 89-Ա որոշումը և հաշվի առնելով <<Պիոն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Սեփականության իրավունքով «Պիոն» ՍՊԸ-ին պատկանող 07-008-0282-0193 ծածկագրով 1.4509 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի /1.1719 հա/ և խոտհարքի /0.279 հա/ նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի՝ ջերմոցային տնտեսություն և գյուղ. արտադրանքի վերամշակման պահեստ կառուցելու համար:

2. «Պիոն» ՍՊԸ-ին պատկանող գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունների նախագծման թույլտվության համար տրամադրել 18.11.2025թ. թիվ ՆԹ-10424-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
3. Առաջացած հողատարածքը հասցեավորել ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 3:***
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» նոյեմբեր 2025 թվականի N 1292

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Շահնազարյան	Ծովինար	AU0547257	30000	դրամ
Գրիգորյան	Անի	AR0487871	30000	դրամ
Արշակյան	Աստղիկ	012539524	25000	դրամ
Հովհաննիսյան	Լյուդմիլա	AL0406423	25000	դրամ
Ասրյան	Պավել	AO0251940	20000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«25» նոյեմբերի 2025 թվականի N 1291

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամաս, 17-րդ շենք բնակարան 34 հասցեի բնակիչ Պավլիկ Տրդատովի 2025 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 5592/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 04-ի «Պետական, հանրային և համայնքային բնակ ֆոնդի բնակարանների անհատույց սեփականաշնորհում թույլատրելու մասին» թիվ 15 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 8-րդ թաղամաս 17-րդ շենք 34 բնակարան) ***«Տրդատով Պավել»*** բառերը փոխարինել համապատասխան ***«Տրդատով Պավլիկ»*** բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«24» նոյեմբերի 2025 թվականի N 1290

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամաս, 15-րդ շենք բնակարան 25 հասցեի բնակիչ Վալերի Սիմոնյանի 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 5563/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հունիսի 21-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 8 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 8-րդ թաղամաս 15-րդ շենք 25 բնակարան) **«Սիմոնյան Մարիյա Վալերիի»** բառերը փոխարինել համապատասխան **«Սիմոնյան Մարիա Վալերիի»** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2025 թվականի N 1289

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 1254 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 10-ի «**Կորյուն Բաղյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 57 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին»** թիվ 1254 որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
2. «Օրինական ճանաչված շինությունների համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 562.000 ՀՀ դրամ::

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» նոյեմբերի 2025 թվականի N 1288

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/8 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Մուշեղ Խաչատրյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 19112025-07-0047 վկայական) ***ք. Չարենցավան Հոկտեմբերյան փողոց թիվ 1/8*** հասցեում գտնվող 35.0 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 90.6 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Մուշեղ Խաչատրյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Մուշեղ Խաչատրյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 59000 (հիսունինը հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 262000 (երկու հարյուր վաթսուներկու հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Մուշեղ Խաչատրյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Մուշեղ Խաչատրյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» նոյեմբերի 2025 թվականի N 1287

«ՊԵՏԱԿԱՆ 1 ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՏՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՆԽԻԿ ՀԱՇՎԱՐԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 7-րդ շենքի 4 բնակարանի բնակիչ Ժուդեքս Փիլիփոսյանի 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 5559/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Պետական 1 հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիներին կանխիկ հաշվարկով վաճառելու մասին» 1993 թվականի հունիսի 17-ի պայմանագրի «պայմանագրի առարկան» բաժնում և 7-րդ կետում «Ժուդեքս Անդրանիկի Փիլիպոսյան» բառերը փոխարինել համապատասխան «Ժուդեքս Անդրանիկի Փիլիփոսյան» բառերով (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 6-րդ թաղամաս 7-րդ շենք 4 բնակարան):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2025 թվականի N 1286

ԱՐՄԵՆ ՆԱԼԹԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի և կադաստրային կոմիտեում հաշվառված չափագրման տվյալների մուտքագրման 2024E8GDW3 ծածկագրի, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Արմեն Նալթակյանի կողմից 07-008-0311-0040 ծածկագրով 0.05 հա մակերեսով հողատարածքից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 40.5 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

07-008-0311-0040 ծածկագրով հողատարածքը հասցեավորել «**Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Սարալանջ թաղամաս, 12-րդ փողոց, թիվ 50**»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2025 թվականի N 1285

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Վ. Օհանջանյանի 10.09.2025 թվականի թիվ 4345/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Վիլեն Օհանջանյանին պատկանող **ք. *Չարենցավան Մ. Խորենացու փողոց 7-րդ փակուղի թիվ 4 /հողամասի մակերես՝ 0.00323 հա/ և ք. Չարենցավան Մ. Խորենացու փողոց թիվ 8 /հողամասի մակերես՝ 0.0036 հա/*** գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես **ք. *Չարենցավան Մ. Խորենացու փողոց 7-րդ փակուղի թիվ 2 /ընդհանուր մակերեսը՝ 0.00683 հա/***:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2025 թվականի N 1284

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20/5 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Սուքիաս Խոսրոֆյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 25042025-07-0173 վկայական) ***ք. Չարենցավան Օղակային փողոց թիվ 20/5*** հասցեում գտնվող 14.1 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ կիսանկուղը, և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 14.1 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Սուքիաս Խոսրոֆյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Շինության՝ կիսանկուղի 1 քառակուսի մետրի համար՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Սուքիաս Խոսրոֆյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 56000 (հիսունվեց հազար) դրամ՝ շինության՝ կիսանկուղի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 63000 (վաթսուներեք հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Սուքիաս Խոսրոֆյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Սուքիաս Խոսրոֆյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**